



Ս. ՄԻԻՌՈՆԸ ԱՌՆՁԵԼ ԿԵԱՆՔԻՆ

(Ի ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ ՄԻԻՌՈՆՕՐՀՆԷՔԻ,

Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԷՋ)

Հինգ տարիներ առաջ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Տաճարի մուտքին, ջրեղաշուք բեմի վրայ, հայոց եռագոյն դրօշի տակ, կանգնել էի իմ երջանկայիշատակ նախորդին՝ Վաչագէն Ս Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողքին և որպէս Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ սիրտս իր սիրտին ընդելուծած, աղօթքս իր աղօթքին միախառնած, կը մասնակցէի, պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով, Միտոնօրինէքի այն բացառիկ արարողութեան, որ առաջին անգամ կը կատարուէր վերանկախացեալ հայրենիքի հողին վրայ, ի ներկայութեան Հայոց պետութեան առաջին սպասաւորին՝ Խորհրդարանի նախագահին՝ Լևոն Տէր-Պետրոսեանի, պետական աւագանիին ու բազմա-հազար հաւատացեալներու:

Հինգ տարիներ ետք աստուածային աննախատեսելի և անճառելի տնօրինութեամբ, ահա կը պատրաստուիմ յառաջիկայ Սեպտեմբերի 8-ին կատարելու իմ առաջին օրհնութիւնը Ս. Միտոնի, որպէս Կաթողիկոս Ամենայն Հայոց:

Սիրտս լեցուն է յուզումնախառն ապրումներով: Եւ առաջին այս խօսքը որ կ' ուղղեմ հայ ժողովուրդին ի պատրաստութիւն հոգևոր այդ մեծ կոչունքին, առ Աստուած գոհաբանական և հայցողական զգացումներով է ներթափանցուած.

«Ո՛վ Տէր Աստուած, Հայր Բարեխնամ, արժանի ըրէ զիս այս մեծ պատիւին, անտեսանելի ձեռքերուդ ամենազօր ոյժը դիր տեսանելի և տկարազօր ձեռքերուս մէջ, Ս. Գրիգոր Լուսաւորչի Աջին խորհրդագործ հպումը մատնէրուս թող ըլլայ բախասան նուաստութեանս, և բերէ ինձի նախորդ-

ներուս ոգեղէն հաղորդութեան ոյժը որպէսզի երբ 8 Սեպտեմբերին « Օրհնեցի և օծցի և սրբեցի Միւռոնս այս ... սրբոյ Լուսաւորչի Աջովն... » բառերն արտասանեմ Ս. Էջմիածնի այս ոգեշունչ սրբավայրի բաց երկինքին տակ, Ս. Հոգիդ որպէս ցօղ երկնային իջնէ և կենսացնէ իւղն անուշահոտ և պայն վերածէ Քու Օծեալ Որդւոյդ՝ Քրիստոսի շնորհաց աղբիւրի ի կեանս "փոքրիկ հօտ"ին Հայոց, ի Մայր Հայաստան, յԱրցախ և ի ծագն մերձաւոր և հեռաւոր աշխարհաց սփիւռք անուանեալ":

Սիրելի՛ հաւատացեալք,

Ահա հինգ տարիներ սահեցան այն պատմական օրէն ասդին, երբ Վապգէն անմոռանալի Կաթողիկոսը "Անկախութեան Միւռոն" հռչակեց իր վերջին օրհնած Միւռոնը... : Փառք տանք Աստուծոյ և պատիւ ընծայենք բոլոր վաստակաւորաց՝ մեծաց և փոքունց, արանց և կանանց, ծերոց և տղայոց, հայազգեաց և օտարազգի բարեկամաց, որոնք իրենց "լումայ"ն դրին Հայոց պատմութեան կենսաշարժ և յարակերտ գանձատան այս վերջին հնգամեայ գանձարկղին մէջ, և հայոց Սուրբ Միւռոնով օրհնեալ Անկախ Հանրապետութիւնը մնաց անլիտանգ, քալեց յառաջադէմ և ամրացաւ խորագնաց:

Զգիտեմ, ի՞նչ բառ գտնել Սեպտեմբեր 8-ին բնորոշելու համար իմ առաջին օրհնելիք այս Միւռոնը: Բայց կը պզամ հոգիիս մէջ ապրումներէ, պագումներէ, խոկումներէ, միամեայ փորձառութենէ, աշայուրջ դիտարկութենէ ծագումնաւորուող գաղափարներու շարժումը, վերածաղկում, վերանորոգում, հայութեան վերաբաղաբաւորում, վերականգնման պարգացում և այլ յարակից բառերու կերպաւորումով տարալելի:

Այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, ողջ հայութեան հաւատքի սիրտը, նոր տրոփիւններով կը բաբախէ: Մեր դարաշունչ եկեղեցական, հոգևոր, ծիսական ամանդոյթները, Աստուածաշունչ Մատեանով ներշնչուած, և մեր հայ հոգիի ստեղծագործական մշակութային արժէքներով սննդաւորուած, վերստին կը պարթնուն մեր ժողովուրդի կեանքին մէջ: Գարնան շունչն է, որ նոր թարմութեամբ կը պայծառացնէ, կը խմորէ մեր կեանքը: Եօթանասուն տարիներու թմբիրը ծառին վրայ կոշկոտ դարձած կեղևի նման օրէ օր կը չորնայ ու կը ճաքի, աշնան դեղինն ու ձմրան մեռելային ընդարմութիւնը կը չքանան, կենսայնութեան խորհրդանիշ վառ կանաչին զիջելով իրենց եօթաւառամեայ տիրապետութիւնը: Աւետարանական խօսքով՝ թզենիին ոստերը սկսած են կակղանալ, և մերձ է ամառն, լիութեան և պարարտութեան օրը: Այո՛, "Մեր Հայրենիք"ը նոր շէշտ կը պզենու, վառ ձայներով կը հնչէ, որովհետև մեր հայրենիքը կ' երթայ յառաջ, մեր նահատակներու կտակին հաւատարիմ, ապրող սերունդին սպասաւոր և գալիք սերունդներուն կտակապարզ:

Վերապարթումի պահին է այս, այո՛, բայց ո՛չ դիրքին ժամանակ, ո՛չ հեշտ շրջափոխություն: Չարթնույր ունի իրեն յատուկ դժուարություններն ու փորձությունները: Բայց ի՞նչ փոյթ: Աստուածադիր կարգի ընթացքը չի կրնար խափանուիլ: Բայց կենսական է, նոյնքան աստուածադիր օրէնք, որ մենք՝ մարդիկս, գիտնանք գործակիցները ըլլալ Աստուծոյ, այնպէս, ինչպէս երբ ինք եկեղեցին տնկեց աշխարհի և Հայաստանի մէջ, "ծիր մշակք" և "մատոռակք" հանեց "հայրատունկ այգւոյն"-առաքեալներ, հայրապետներ, վարդապետներ, քահանաներ, սարկաւագներ, աշխարհական սպասաւորներ, եկեղեցւոյ հաւատաւոր և հաւատարիմ անդամներ:



Աւետարանի մէջ սքանչելի դրուագ մը, կայ կենդանի հարապատութեամբ պատմուած. —

Յիսուս իր քարոզութեան և ժողովրդական ծառայութեան սկիզբը, օր մը, երբ իր ծննդավայր Նապարէթ քաղաքն էր այցելած, Գալիլիոյ նահանգին մէջ, սինակոկ գնաց, ըստ իր ազգի կրօնական ասանդութեան և ըստ իր անձնական սովորութեան: Երբ հրաւիրուեցաւ օրուան Ս. Գրական ընթերցումը կատարելու, բացաւ Եսայի մարգարէի գրքի այն բաժինը, ուր ըսուած էր.

"Տիրոջ հոգին իմ վրայ է.

Որովհետև զիս՝ օծեց և ղրկեց՝

- Աղքատներուն փրկութեան աւետիսը տալու

- Սրտով կոտորուածները բժշկելու,

- Գերիններուն նպատութիւն շնորհելու,

- Կոյրերուն տեսողութիւն ընծայելու,

- Կեղեքուածներուն իրաւունքը հաստատելու,

- Եւ յայտարարելու, թէ այլևս եկած

է ժամանակը Տիրոջ փրկութեան":

Քրիստոս ի՞նքն է Օծեալը. ո՛չ սոսկ իբրև բառ (Քրիստոս), այլ որպէս առաքելութիւն: Աստուծոյ Օծեալը, որ իր աստուածային անտեսանելի և անշօշափելի բնութիւնը խառնեց-միացուց մեր մարդկային բնութեան, եղաւ Միւռոն, նիւթին մէջ հոգի, որ կերպարանափոխեց մեր ողջ գոյութիւնը:

Ս. Իւղը՝ Միւռոնը, "այս նիւթեղէն պանգուածը պանծալի պատկերն է երկնքի արարիչիդ" (Ս. Գրիգոր Նարեկացի) : Եւ ինչպէս Արարիչը արարիչ է իր արարածներով, այնպէս և իւղը միւռոն է իր առաքինագործ զօրութեամբ: Իւղը իւղ չէ իւղին համար, իւղը իւղ է մե՛կ համար, երբ կ' ըլլայ միւռոն՝ կը դառնայ, նոյն Ս. Գրիգոր Նարեկացիի բառով, "ողորմութիւն", այսինքն՝ կը ճառագայթէ՝ մեր կեանքին մէջ, կը մարմնաւորուի մեր գործերով, կը վարդարուի առաքինութեան գոյնով, կը դրոշմուի բարութեան

բնութագրծով և կը պտղաբերուի երջանկութեան բարիքներով: Նոյն աստուածամերձ և սրբագիր բանաստեղծը կ'ըսէ. «Ինչպէս խաւարը՝ լոյսին, ցաւը՝ առողջութեան, գիշերը՝ ցերեկին, մահը կեանքին հետ չեն կրնար միասին ըլլալ. այնպէս և այս աստուածապարզն իրին (Ս. Միւռնին) առջև կը խափանուին և բնաջինջ կ' ըլլան չարին բոլոր գործերը» (Բան. ՂԵ. 14) :

Հետևաբար, Միւռնը, որ պիտի օրհնենք Ս. Էջմիածնի մէջ թող չըլլայ զուտ եկեղեցական, ազգային, սրբական, ծիսական ասանդութիւն: Թող դառնայ կեանքի մէջ թարգմանուող հոգեկան ու ազգային բարեշրջութիւն: Բրիստոն Օծեալը եկաւ և իր Օծուածն ըլլալը արտայայտեց աղքատներուն, սրտով բեկուածներուն, ճնշուածներուն, զրկեալներուն, գերիններուն, կոյրերուն համար յոյս և յոյս դառնալով, դեղ ու դարման հանդիսանալով, բարիք և փրկութիւն բերելով:

Այսպէս և մենք երբ կը պատրաստուինք Ս. Միւռնին օրհնութեան, ո՛ր ալ ըլլանք, Մայր Հայաստանի մէջ թէ Արցախի, Կովկասի մէջ թէ Ռուսաստանի, Եւրոպայի մէջ՝ թէ՛ Արևելեան, թէ՛ Արևմտեան, Ամերիկայի մէջ՝ թէ՛ Հիւսիսային և թէ՛ Հարաւային, Մայրագոյն թէ Միջին Արևելքի մէջ, այս նոր Միւռնին մէջէն զգանք և տեսնենք մեր ողջ հայութեան հոգեկան վերանորոգումը, վերաբիրեղացումը: Չարն ու մեղքը մերն են, որքան բարին և սրբութիւնը: Մեղանչելը, սայթաքիլը, մոլորիլը, պառակտիլը մեր կեանքին մէջ իրողական տարրեր են, բայց մեր բնատիպ ինքնութեան կը պատկանին վերականգնիլը, վերակապմուիլը, վերամբողջանալը, վերառողջանալը, վերստին հարապատանալը մենք մեզ հետ: Հայրենիքն ու հայութիւնը վէրքեր ու ցաւեր դեռ շատ ունին. սրտով բեկեալներու թիւը դեռ ստուար է և բազմատեսակ. ամպերը դեռ բոլորովին չեն փարատած. գետերը դեռ չեն վարարած. ծովերը դեռ չեն խաղաղած. դաշտերը դեռ լիովին չեն ակօսուած. գործատեղիներուն մէջ դեռ շատ ժանգ կայ կապած. դօղանջները դեռ չեն համապանգ ու ներդաշնակ. միտքերը դեռ չեն յստակուած, կամքերը դեռ չեն վերագտած իրենց առհաւական պրկութիւնը. հոգիներուն մէջ դեռ խռովք կայ, սիրտերուն մէջ դեռ վիշտերը չեն ամոքուած, հորիզոնը դեռ չէ այնպէս պարզ ու լուսագիծ:

Եւ ահա Միւռնը այս բոլորին մէջ յոյսի ցոլք է, յոյսի շող է, բալասան է բոլոր անոնց համար, որոնք ազգն ու հայրենիքը, Եկեղեցին ու հաւատքը, լեզուն ու մշակոյթը ունին իրենց գոյութեան և կեանքին մէջ ընդելուզուած:

Օրէ օր դէպի յոյս ընթացող մեր այս նոր դարաշրջանին, Անկախութեան և Ազատութեան այս յառաջագնաց ճանապարհին վրայ, աղօթենք և զգանք, մտածենք և գործենք այնպէս, որ յոյսի բոցին առաւել կեանք տանք մեր սեփական շունչովը, մանաւանդ այժս օրերուն — ու գալիք տարիներուն — երբ մտած ենք մեր Ս.

Եկեղեցւոյ պաշտօնական հիմնադրութեան 1700-ամեակի տօնակատարութեան ընթացքին մէջ: Մեր ոյժերը բազմապատկելու և ի գործ արկանելու հրամայականին առջև ենք բոլորս անխտիր:

**

Քրիստոնէական պատմութեան երկրորդ հապարամեակի փակման հանգրուանին վրայ ենք կանգնած: Եկեղեցական կանոնական աւանդութեամբ դիտուած, այս Միոռնօրհնէքը (Սեպտեմբեր 8, 1996, ի Ս. Էջմիածին) 20 -րդ դարու վերջին Միոռնօրհնէքը պիտի ըլլայ՝ երրորդ հապարամեակի արշալոյսին թողնելով յաջորդ Միոռնի օրհնութիւնը:

Եկէք այնպէս պատրաստուինք, որ այս նորօրհնեալ Միոռնը դառնայ ո՛չ աւանդութեան Միոռն, աւանդական սովորոյթ, յաճախ ձեւականութեան պարագայականութեամբ յատկանշուած, այլ դառնայ կեանքի՝ Միոռն, նո՛ր կեանքին, նորացո՛ղ կեանքին, պայծառակերպութեան կեանքին մեր հայրենիքին մէջ, մեր անկախ պետականութեան ամրացման և վարճացման հեռանկարով, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի «նորափետուր պարդարմամբ» և ողջ հայութեան ու համայն Հայ Եկեղեցւոյ պայծառակերպութեան տեսիլքով ի Մայր Հայաստան և ի ծագս աշխարհի:

ԳԱՐԵԳԻՆ Ա

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ